# ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆ

## ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂ ԵՎ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

*Տաթև գյուղը համանուն վանքով գտնվում է այժմ Գորիսի շրջանի մեջ։ Հնում նա մտել է մեծ մասամբ Ծղուկ և երբեմն էլ Բղեն գավառների մեջ։*

*Տաթևի հիշատակությունը պատմական աղբյուրների մեջ շատ հին է. դեռևս Գահնամակի մեջ հիշատակված են «Տաթևեանք»։*

*Սակայն Տաթևի վանքի ծաղկումն սկսվում է 9-րդ դարի սկզբից, երբ Դավիթ եպիսկոպոսը Սյունյաց Փիլիպե իշխանից 10,000 դրամով գնում է Տաթևի շրջապատի հողամասերը։ Այդ ժամանակներից դառնալով նաև եպիսկոպոսարան, վանքն աստիճանաբար ձեռք է բերում հսկայական կալվածքներ Սյունյաց ամբողջ նահանգի մեջ, և փաստորեն դառնում է խոշորագույն ֆեոդալական կազմակերպություններից մեկը։*

*Ըստ պատմագիր Ստ. Օրբելյանի՝ Տաթևի վանքին հարկատու էին Սյունիքի վեց հարյուր յոթանասունյոթ գյուղեր։*

*Այդ հսկայական եկամուտները հնարավորություն էին տալիս ծավալել ինչպես կուլտուրական, այնպես էլ շինարարական մեծ աշխատանքներ։*

*Նախապես գոյություն ունեցող թե՛ եկեղեցիները և թե՛ վանքին կից այլ օժանդակ շենքերը այլևս չեն բավարարում եղած պահանջները և 9-րդ դարի վերջին բոլոր հին շենքերը քանդվում են ու նրանց տեղը նորերն են շինվում։Ապա ամբողջ վանքն ու օժանդակ շենքերը շրջապատվում են բրգավոր և ամուր պարիսպներով ու դառնում իսկական նախարարական գղյակ-բերդ, որի ներսում՝ հսկայական պահեստների մեջ կուտակվում են բնատուրքով գանձվող մթերքները և վերամշակման ենթարկվում հենց պարսպի ներսում կառուցված արհեստանոցների մեջ (ձիթհան և այլն)։*

*Շինվում են երբեմն 1000-ի հասնող վանականների համար ապրելու և կենցաղային շենքեր (բաղնիք). ինչպես նաև կուլտուրական հիմնարկների՝ դպրոցի, գրադարանի և այլն շենքեր, որտեղ գործել են Գ. Տաթևացին և Հ. Որոտնեցին։*

*Այս բոլոր շինությունների էլ այժմ կանգուն կամ կիստվեր վիճակում դեռևս գոյություն ունեն։*

## ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

### *Ա. ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ*

*Տաթև գյուղի սահմաններում գտնվող հնագույն և նշանավոր հուշարձանը Տաթևի վանքն է, որը տեղավորված է գյուղից մոտ մեկ կիլոմետր արևելք անդնդախոր ձորի պռունկին։*

*Վանքի հուշարձանների խումբը բոլոր կողմերից շրջապատված է բրգավոր պարիսպներով, իսկ հարավից և արևելքից նաև անդնդախոր ձորերով։*

*Հուշարձանների գլխավոր խումբը տեղավորված է ընդարձակ բակի կենտրոնում. դրանք են.*

1. Պողոս և Պետրոս առաքյալների *անվան նվիրված գլխավոր տաճարը՝ հիմնադրված 895 և ավարտված 906 թ. (տես արձանագրություն № 1)։*

2. Սրահ-Գավիթը. *կից Պողոս-Պետրոս եկեղեցուն հարավից. շինված 1043 թվականին. (արձան., № 23)։*

3. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, *կից Պողոս-Պետրոս եկեղեցուն հարավ արևելքից և Սրահ-գավթին՝ արևելքից, շինված է 1295 թ. պատմագիր Ստ. Օրբելյանի կողմից (արձանագրություն № 40)։*

4. Փոքր Գավիթ. *Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան մուտքի առաջ, ուր կային նշանավոր վանականների և այլոց գերեզմանները, որը ոտկայն հիմնովին քանդել են 1896թ. և տեղը զանգակատուն շինել։*

5. Գրիգոր Տաթևացու մատուռ-դամբարանը. *շինված սրահի մեջ, Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային մուտքի առաջ. կառուցված 1787 թվականին. (արձանագրություն № 37)։ (Դամբարանի վրայի կոթողիկեն քանդված է այժմ. մնացած մասերն ամբողջ են, բայց ծածկված են փլվածքներով ամեն կողմից)։*

### Բակի մյուս հուշարձաններն են

6. Գավազան-սյուն. *մի գեղեցիկ և թեքվող կոթող. կանգնած է գլխավոր խմբից հարավ, բակի մեջ. շինված է գլխավոր տաճարի կառուցման ժամանակ, հավանաբար 895 թվականին (արձանագրություն № 2)։*

7. Ս. Աստվածածին եկեղեցի. *գտնվում է գլխավոր խմբից հյուսիս-արևմուտք, պարսպին կից, կամարակապ շենքերի վրա, որպես երկրորդ հարկ. շինված է 1087 թ. (արձանագրություն № 47)։*

*8. Բազմաթիվ օժանդակ տնտեսական և կենցաղային շենքեր, շինված զանազան ժամանակներ, որոնք կից են պարիսպներին։*

*Թված բոլոր հուշարձաններն էլ Զանգեզուրի վերջին, 1931 թ. երկրաշարժի ժամանակ, սաստիկ վնասվել են. հատկապես գլխավոր խումբը. այսպես, Պողոս-Պետրոս գլխավոր տաճարի գմբեթի մեծ մասը փլել է ու պատերը սաստիկ ճեղքվածքներ են ստացել։ Սրահ-գավիթն ամբողջապես կործանվել է, կանգուն են մնացել Պողոս-Պետրոս եկեղեցու պատին հենված նրա մույթերը միայն։ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծածկը, հարավային պատի մի մասը և արևելյան պատը փլել են։*

*Մնացած հուշարձանները ևս մեծ կամ փոքր չափով վնասվել են։*

## *Բ. ԱՅԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ*

9. Ս. Մինաս եկեղեցի, *շինված է 1646 թ. (№ 87) գտնվում է գյուղամիջում։*

10. Աղբյուրի շենքի մնացորդներ, *շինված է 1745 թ. (№ 86) գտնվում է գյուղի հարավ-արևելյան ծայրին վանքի մարագի և ախոռի ավերակների կողքին։*

11. Խաչքար *13-րդ դարի արձանագրությամբ. գտնվում է Տաթևի գետակի աջ ափին, վանքի դիմաց. ս. Աստվածածին փոքր եկեղեցու արևելյան պատի տակ դրսից։*

12. Մեծ կամ Տաթևի անապատ. *գտնվում է գյուղից ներքև Որոտանի և Տաթևի գետակի միախառնման եռանկյունու վրա. պարսպապատ է և բազմաթիվ օժանդակ շինություններով՝ պարսպի ներսում, շինված է 17-րդ դարում։*

13. Հին խաչքարեր և գերեզմանաքարեր—*ցրված գյուղի շրջակայքում և դեպի մեծ անապատը տանող ճանապարհի վրա։*

* * *

*Տաթևի վանքից և գյուղի սահմաններից այս պրակի մեջ ամփոփված են 93 արձանագրություն, դրանցից 48-ը հրատարակվում են առաջին անգամ։*

*Կարևոր ենք համարում նշել, որ արձանագրությունների հնագույն և գրչագրական տեսակետից լավագույն մի խումբ առանց թվականի են (№№ 3, 4, 5, 6, 7)։ Արձանագրությունների այս խումբը աչքի է ընկնում գեղագրությամբ և ուրույն ոճով. դրանք գրված են նախորոք փոքր խաչքար-հիշատակարանների կամ երեսպատման քարերի վրա և տեղագրված են գլխավոր, Պողոս-Պետրոս, եկեղեցու պատերի մեջ, ակնառու տեղերում՝ շինարարության ընթացքում. հետևաբար դրանք գրված են 895—906 թվականներին։*

**1. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, արևմտյան պատի հարավային մասի ներքևում.*



ՅԱՄԻՆ ՅՈՐՈՒՄ ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՅՈՑ : ՅԽԴ : ԷՐ, ԵՒ ՁԱՏԻԿՆ Ի ՆԱԽԱՍԱՐԴԻ Ի : Դ :. ԵՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԵՑԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ ՁԿՆԻ ՏԵԱՌՆ ՍԱ- ՂԱԻՄԱԻՆԻ, ԱՐԱՐԻ ՍԿԻԶԲՆ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ[1]:

*Այժմ կիսեղծ այս արձանագրությունը իր ժամանակ օգտագործել է Ստ. Օրբելյանը, որից արտագրել են Ալիշանն ու Կոստանյանցը։ Տալիս ենք տեղում պահպանված մասերը և Օրբելյանի վերծանությունը։ Պատմագիրը պահպանելով բովանդակությունը, շարադրել է յուրովի։*

*Ստ. Օրբելյան, 224, Ալիշան, 227.*
*Կոստանյանց, 4.*
*Լուսանկ. տախտ.* I, *1.*

**2. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, արևմայան պատի հարավային մասի ներքևում. Նախորդին կից հարավից։*



ՀՐԱՄԱՆԱՒ ԱԾԱՊԱՀ| ՏԵՐԱՆՑ ԵՒ ՅԱՒԺԱՐՈՒ|ԹԵԱՆԲ ԻՄՈՑ ԿՐԱՒՆ|ԱՒՈՐԱՑ ԵՒ ԻՆՈՑՆ ՏԱ|ՐԻՈՋ Ի ՑԵՒԹՆԵՐՈՐԴ| ԱՄՍՈՅՍ ՑԱՐԱՑ ԿԱ|ՆԿՆԵՑԱՒ ԱՐՁԱՆՍ:

*Արձանագրությունը վերաբերում է Սյուն- գավառի շինությանը. «Ի ՆՈՑՆ ՏԱՐԻՈՋ» խոսքերը վերաբերում են 1 արձանագրության : ՅԽԴ : թվականին։ Երկու արձանագրությունները իրար կից են և միաժամանակ գրված։*

*Լուսանկ. տախտ.* I, *2.*

3. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևմտյան պատի կենտրոնում. մուտքից վեր ագուցված հիշատակարան—խաչքարի շրջանակներին.



ԶՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ՇԻՆՈՂ|ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑ-ԵԱՑՍ|, ՏՐ ՅԻՇԵԱ:

Վերջին տողը գրված է խաչքարից վեր երեսպատման քարի վրա. լուսանկարում չի երևում։

Փափազյանց, Ե.
Լուսանկ. տախտ. I, 3.

4. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ հյուսիսային՝ անկյունում ընկած պատի վերին մասի մեջ միացած մի բեկորի վրա.



[ԶՅՈՎԱՆ]ԷՍ ԶՍԻՒՆ[ԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԻ-ՇԵՑԵՔ].

Լուսանկ. տախտ. I, 4.

5. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ ներքուստ. վերից թափված քարերի մեջ ընկած երեսպատման քարի վրա.



ԶՅՈՎԱՆՆԷՍ | ԱՆԱՐԺԱՆ Ի ՔԱ|ՀԱՆԱՅՍ ՅԻՇՑԵՑԷՔ]:

Ըստ Ալիշանի տեղեկատուի եղել է արևմտյան մուտքից վեր պատուհանի գլխին ագուցված և սկզբից ունեցել է ԱՒԳՆԵԱ ՄԵԶ ՔՐԻՍՏՈՍ բառերը,

Փափազյանց, Ե։ Ալիշան, 235.
Լուսանկ. տախտ. !. 5.

6. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևմտյան պատի հյուսիսային մասում երեսպատման քարի վրա.



ԶՀԱՅՐ ՇԱ|ՊՈՒ ՅԻՇԵՑԷՔ,

Ալիշան, 235.
Լուսանկ. տախտ. I. 6.

7. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևմտյան պատի հարավային մասում. քանդակազարդ երեսպատման քարի վրա. զարդերի շուրջը.



ԶՅՈՎԱՆԷՍ ԵՐԷՑ| ՍՈԴՈՔ ՅԻՇԵՑԷՔ:

Ալիշան, 235.
Լուսանկ. տախտ. I, 7.

*8. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևմտյան պատի հյուսիսային մասում.*



ԶՇԱՊՈՒ ԵՐԷՑ ԽԱՒՏԵՑԻ, ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԾԱՌԱՑ, ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ̅.

*Արձանագրության սկզբի մասերը ծածկված են նորաշեն զանգակատան պատով, ուղղումներով լրացնում ենք ըստ Ալիշանի։*

*Ալիշան, 235.*



*9. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ, արտաքուստ. արևմտյան պատի հյուսիսային մասում.*

|ԶՀԶԱՐ,| ՇՆՀԱՒ|ՈՐ ԴԻՒԼԽԱՒՇ...

*Վերջին տողը բոլորովին եղծված է.*

*Լուսանկ. տախտ.* II, *8։*



*10. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևմտյան պատի հյուսիսային մասում. Նախորդից մեկ շարք ներքև.*

ՇԱՀԲԻ| ԱՐՂԱՐԱՔ:ԱՐՍ ՈՒ| ՂԱԶԱ|ՆՍ ՑԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՍ̅.

*Քարի աջ կողմը գրելու ժամանակ հողմահարված է եղել և չի օգտագործվել։*

*Լուսանկ. տախտ.* II, *9.*

*11. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ. հարավային մույթի հյուսիսային կողին. յոթ շարք քարերի վրա եղծված արձանագրություն. միայն ներքևի երկու շարքի վրա կարդացվում է հետևյալը (գծագրվածը)։*

*ԸՍՏ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ*

*Այս գիր յիշատակի և արձան անջնջելի է իմ Տարսայիճիս՝ իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լիպարտի՝ եղբաւր Սմբատայ՝ մեծ իշխանի, կողմնակալի լայսմ նահանգի, որ իշխեցող էի այսմ գաւառաց ի դրանէն Բարկուշատայ մինչև ցսահմանն Բջնւոյ. միաբանեցայ Տաթեւոյ սուրբ Առաքելոցս և տվի զիմ հոգւոյ մասն ի յիմ սեփական ուխտս ի սուրբ եկեղեցիս գիւղս վեց, զոր լուեալ էաք ի հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին՝ զՇնհէր, զՄոտն աւան սահմանօք իւրովք, լերամբ և դաշտիւ, և ի Խոտագետ և ի Խոտ զմեր ձեռատունկ այգին, և զՑուր և զՀարժիս իւր սահմանովն, զորոյ զկէսն Գանձագին էի արարեալ. և զԲորտի, զՔեթիվանս իւր սահմանովն. եւ եպիսկոպոսք տեղւոյս Տէր Հայրապետ և Տէր Սողոմոն հաստատեցին մեզ յիշատակ, եւ կարգեցին պատարագ յամենայն ամի մին քառասունք, զծ*

*Ցայտնութեանն, զծ՝ Զատկին, զծ՝ Աստուածածնին, զծ՝ Աւագ տօներին, զի օրն ինձ Տարսայիճիս և զի օրն իմ եղբաւրն Սմբատայ։ Արդ՝ որ յետ մեր ի մերոց կամ յաւտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց աւս հաստատ պայմանս և անքակ վճիռս խափանել ջանայ, կամ դայն գիւղաւրէքն կամ զայգին յայս եկեղեցւոյս հանել խորհի՝ բաժին ընդ Ցուդայի և ընդ խաչահանուացն եղիցի, և զԿայենին և զամենայն չարագործացն առցէ պատիժս, և յերից սուրբ ժողովոցն նզովեալ լիցի. և թէ տաճիկ աւագ փոխի և յափշտակել ջանայ՝ յԱստուծոյ և իւր փեղամբարէն ապիզար եղիցի, և ընդ սատանայի ի դժոխս իջցէ, և տամբք և զաւակօք ջնջեալ և բարձեալ եղիցի. իւր ճալալն լինի ճարամ, և հազար, հազար, հազար նալաթ լիցի. ի թուիս ՉԻԳ, յամսեանս Նոյեմբերի ԺԳ։*



*Եւ է վկայ այսմ վճռիս Տէր Սարգիս՝ Նորավանից եպիսկոպոս. եւ Սարգիս՝ փակակալ սուրբ եկեղեցւոյս. եւ յիմ ազատաց Հասան՝ Կարապետի որդի, Որոտշահ՝ Լորայ թոռն, Միրան՝ Նուերայ որդի. հաստատ է կամաւն Աստուծոյ. Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիս։ Ցուսոփս Աստուծոյ ես Տարսայիճս իմ ձեռագրովս հաստատեցի զնծայքս. արդ՝ որ յետ իմ յիմ զաւակացս և թոռանց կամ յայլ իշխեցողաց զմեր հոգիս զրկել խորհի և զմեր յոյսն խափանել և զմեր սահմանեալս քակել ջանայ՝ յԹԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի ի մահ և ի կեանս, կորեալ և ջնջեալ լիցի յայս կենացս և ի հանդերձելոյն, ամէն։*

*Գծագրում վերջին ԳՐԵՑԻ բառը ավելի խոշոր տառերով է.*

*Օրբելյան, Գլ. ԿԶ, 416—418, որից արտագրել են՝ Շահխաթունյան Բ. 384. Ջալալյան Բ. 284—285. Ալիշան, 232. Կոստանյանց, 116—117 (կրճատումներով)։ Լուսանկ. տախտ. II, 10.*

**12. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *Ներքուստ. հարավային մույթի արևմայան կողին. հինգ շարք երեսպատման քարերի վրա կիսեղծ արձանագրություն.*



ԵՏՈՒ Ի ՍԲ ԵԿԵՂԵՑՈՑՍ| ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՔ ՄԵՂՈՑՍ ՏՐ| ՀԱՅՐԱՊԵՏ ՈՒ ՏՐ ՍՈՂՈՄՈՆ ԵՒ| ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ԿԱՐԳԵՑԻՆ ԻՆՁ:| Ե: ԱՒՐԺԱՄ Ի ՏԱ|ՐՈՋ. ՈՐ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵՆ, ՈՐ ԱՆՓՈՑԹ ԱՌՆԷ Զ|ԿԱՐԳԵԱԼ ԺԱՄՍ: ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ|. ԻՍԿ Կ ԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԵԱԼ| ԵՂԻՑԻՆ:

*Սկզբի մասի քարերը լրիվ հողթահարված են, միայն երկրորդ շարքի վրա երևում է ԵՊԻՍԿՈՊՈՍ բառը։*

*Ներքևի մասից, հավանաբար այլ արձանագրության սկիզբ՝ ծածկված է ինչ որ նոր կառուցումով։*

*Տէր Հայրապետ և Տէր Սողոմոն անունների միասին հիշատակումը ապացույց է, որ վերաբերում է 13-րդ դարի վերջին տասնամյակին։*



13. *ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ՝ ներսի փլվածքի մեջ ընկած հիշատակարան-խաչքարի շրջանակներին։*

ԶՏՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՍԻՒՆ|ԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՑԻՇԵՑԷՔ. ԹՎ.։ՉԻ։

*Պատի մեջ որևէ տեղ ագուցված պիտի լիներ, նախնական տեղն անհայտ է։*

*Փափազյանց Ն. Ալիշան, 561 (միայն լուսանկարը).*
*Լուսանկ. տախտ.* III, *11.*

14. *ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. հարավային պատի վերին մասում, պատուհանի արևմուտքում մի քարի վերևում երկու խաչ և տակին երկու փոքր քարերի վրա շիտակ և թարս գրերով։*



ԹՎ.։ԳԾԸ։

*Արձանագրությունն անմատչելի տեղում է. հեռադիտակով ենք դիտել և ճշտությանը երաշխավորել չենք կարող։*



15. *ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևելյան պատին.*

ԱՂՈՒՊՇԱՅ|, ՄՈՒՐՄԵԼԻՔ|, ՍՈ ԼԹԱՆ|, ՅԻՇԵՑԷՔ.։
։ՉԿԱ։

16. *ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևելյան պատի կենտրոնական մասում, երեսպատման քարի վրա երեք խաչ և տակին.*



ԳԵՂԱՐՔՈՑՆՈ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ. Պ,II,Ղ,IIII
ՄԱՋՐԵՑԻ։ ՄՈՎՍԵՍ։_ ԿԱՐՄԻՋՈՅ|
ՎԱՐԱՆԴ ՏԱՊ։ ՂՈՒԼԻԿ ԳԵՏԿԱՅ.

*ՏԱՊ բառը գրված է հրեսանց, հրեի սխալ է եղել և չի շարունակվել. ՂՈՒԼԻԿ ԳԵՏԿԱՑ-ին եղել է Տաթևում ՉՁԱ թվին. տես արձ. 44։*



17. *ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևելյան պատի կենտրոնական մասում. մանր տառերով.*

ԵՍ ՂՈՒԿԱՍՍ ԳՐԵՑԻ ԹՎ.։ՌԾԼԷ։



501—2

**18. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. արևելյան պատի հարավային խորշի կողին. երկու քարի վրա, մանր տառերով.*



ՄԱՐՏԻՐՈՍ ԷՐԷՑ Կ[Ա]Պ[ԱՆ]ԵՑԻ Ո|ԱՑԻՋ ՏԱԹԵ[ՒՈ]Ի.

**19. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ,** *արտաքուսա. հյուսիսային պատի արևելյան մասի բարձրում. 7 տ.*



ԵՍ ԽՈՒՄԱՐԻ ՈՐԴԻ ԽՕ|ՃԱ ԱՆՏՈՆ, Ի ՑԵՐԿՐԷՆ ՂԱ|ՓԱՆՈՒ Ի ԳԵՂԷՆ| ՏԱՇՏՈՒՆՈՒ, ՑԻՇԵՑԷՔ. Թ[Վ]ԻՆ։ ՌՃԾԴ-Ն ՆՈՐՈԳԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ ՏՐ ՄԻՔԱՅԵԼ[Ի]։

*ՑԻՇԵՑԷՔ բառը տեղադրում ենք ըստ իմաստի։*

**20. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուսա. արևելյան պատի հարավային մասում. 2 տող.*



[Ս] ՆՈՐՈԳԵՑԻ ՁԵՌ|ԱՄԲ ՏՐ ՄԻՔԱ[ԵԼԻ].

**21. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. արևելյան պատի հարավային մասում. բարձրում. 6 տող.*



ՆՈՐՈԳԵՑԱՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ| ԿՈՂՄՆ ՏԱՃԱՐԻՍ ՁԵՌ|ԱՄԲ ԵՒ ՀՈԳԱՑՈՂՈՒԹԵԱՄԲ | ՍԻՒՆԵԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱ|ՑՈՑ ՏՆ ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ԱՍԼԱՆԵԱՆՑ ՑԱՄԻՆ 1862.

**22. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. հյուսիսային պատի արևելյան մասում. բարձրում. մի շրջանակավոր քարի վրա. 4 տող.*



ՆՈՐՈԳԵՑԱՆ ՀԻՒՍԻՍ|ԱՑԻՆ ԿՈՂՄՆ ՄԵՆԱՍ-Տ|ԱՆԻՍ Ի 1865 ԱՄԻ ՓՐԿՉԻՆ ՑԱՌԱՋՆՈՐԴ-ՈՒԹԵԱՆ

*Վերջին մասը բարձրության պատճառով չկարողացանք կարդալ, պետք է լինի* **ՏՆ ՍԱՐԳՍԱՑ ՏԷՐ ԳԱՍՊԱՐԵԱՆՑ**—*որովհետև այդ թվին նա է եղել վանքի առաջնորդը.*

*Տես. Սիսական 242.*



**23. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀ.** *Ներքուստ. հյուսիս-արևմտյան մույթի վրա, երեսով հարավ 12 տ։*

ՅԱՄԻ ՅՈՐՈՒ|Մ ԷՐ Թ‚ԻՎՆ‚ :ՆՂԲ:Ի Թ|ԱԳԱ-
ՒՈՐՈՒԹԵ|ԱՆՍ ՍՄՊԱՏԱ Ո|ՐԳՈ ԱՇՈՏՈ| ԵՍ ՏՐ
ՅՈՎԱՆԷՍ| ՇԻՆԵՑԻ ՋՍ|ՐԱՀՍ, ԱՒԳՆԱ|ԿԱՆՈՒ-
ԹԵԱՄԲ| ՍՄՊԱՏԱ. ՈՐՔ ՂԱ|ԴԱՒԹԷՔ
ՅԻՇԵ ՑԷՔ ԻՔՍ.

*Վերջին երկրաշարժի հետևանքով սրահն ամբողջապես փլել է, մնացել են կանգուն միայն հյուսիսային, Պողոս-Պետրոս եկեղեցուն կից մույթերը։ Սրահի ներսն ամբողջովին լցված է փլած բեկորներով, միայն հյուսիսային մույթերի առաջ մի նեղ անցք է մաքրված՝ արձանագրությունները կարդալու համար։ Լուսանկարելու հնարավորությունները վատ են, կամ տարածություն չկա և կամ եղած դեպքում էլ չեղակի են ստացվում և թերի։*

*Ջալալյան Բ. 302, Ալիշան. 235.*
*Լալայան Գ. 141.*
*Լուսանկ. տախտ.* III, *12։*



**24. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀ.** *Ներքուստ. հյուսիս-արևմտյան մույթի կամարի կորության մեջ ագուցված խաչքարի վրա.*

ՅԻՇԵԱ ՔՍ ՋՀՈԱՆՈ [Հ] ԵՒ ՈՂՈՐՄԵԱ.

*Հնարավոր է կարդալ նաև՝... ՋՀՈՍՆ ։ ՈՀ ։ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ։*

**25. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀ.** *Ներքուստ. հյուսիս-արևմտյան մույթի կամարի մեջ ագուցված խաչքարի թևերի արանքում.*



ԹՎ. :ՇԸ

*Եթե գրիչը չի մոռացել թվականի հարյուրավորը, ապա սարկավագդիր թվականով պիտի հաշվել. սակայն Տաթևի արձանագրությունների մեջ նման այլ դեպք չկա։ Սարկավագադիր թվականի սկիզբն է 1084 տարին, որով կստացվի՝ 1084+58=1142.*

*26. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ. երկրորդ և երրորդ մույթերը միացնող կամարի վրա 3 տող.*



ԵՍ ՏԻՐԱՑՈՒ ՔԱՀԱՆԱՑ ՄԻԱԲԱՆԵՑԱՑ ՍԲ ՈՒԽՏԻՍ, ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԻՄՈՑ ԵՏՈՒ ԸՆԾԱՅՆ. ԱՌԱՋՆՈՐԴՔ ՈՒԽՏԻՍ Ի ՍԲ ԽԱՉԻ ՏԱՒՆՅԻՆ: Գ: ԺԱՄ ԵՏՈՒՆ ԻՆՁ ԱՄԷՆ ՏԱՐԻ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ ԱՅ

*Մույթերը հաշվում ենք արևմուտքից։*

*27. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ. երկրորդ մույթի կամարի վերին մասում. փոքր խաչքարի թևի վրա. 1 տող.*




ԳԵՐԳ.



*28. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ. երկրորդ մույթի վրա. երեսով արևմուտք, մանրատառ և գեղագիր. 6 տող.*

ՅԻՇԵԱ ՔՍ.| ԱՅՍ ԱՐՁԱՆ ՓՐԿՈՒԹԻ ՆԿԱՐԵԱԼ ԱՐ|ԵԱՄԲ ՓՐԿՉԻՆ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ՍՈՂՈՄՈՆ ՔԱՀԱՆԱՒՍ.

*Բնագրում վերջին բառը սղումներով է գրված,—տեղ չլինելու պատճառով։*

*Լալայան, Գ. 113.*



*29. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ. երկրորդ մույթի վրա. երեսով հարավ. 11 տող.*

ՅԱՆՈՒՆ ԱՅ| ԵՍ ՎԱՐԴԱՆ Կ|ՐԱՒՆԱՒՈՐ ՇԻՆ|ԵՑԻ ՔԱՐԱՀ|ԱՏԻՆ ՉԱՂԱՑ|ԵԻ ԵՏՈՒ ՍԲ ԱՌԱՔԵ-ԼՈ|ՅՍ. ԵՏՈՒՆ ԻՆՁ Տ|ԱՐԻՆ ԱԻՐ:Ե. ՏՐ ՅՈՎԱՆ...

*Ջալալյանի ժամանակ էս վերջին մասերը եղծված են եղել։*

*Ջալալյան Բ. 302։ Ալիշան, 238։*



***30. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀ.*** *երրորդ մույթի վրա. երեսով հարավ. 14 տող.*

ԹՎ.:Զ.Լ: ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ՅՈՀԱՆ|ՆԷՍ ՔԱՀԱՆԱ ԻՄ ՀԱԼԱԼ ԸՆԶԻՑ ԳՆԵՑԻ ԶԿՈԾՄԱԿՈԹՆ| ՏՎԻ ՍԲ ԱՌԱՔԵԼՈՑՍ ԱՌԱՋՆՈՐԴՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՏՐ ՀԱՅ-ՐԱՊԵՏ ՏՐ ՅՈՀԱՆԷՍ ԵՏՈՒՆ Ի| ՄԱՐԻՆ:Գ: ԱՒՐ ՄԲ| ՅՈՀԱՆՈՒ ԵՒ ՍԲ. ՅԱԿՈԲ|Ա ՏԱՒՆԻՆ.

*Ջալալյան, 302։ Ալիշան 338*
*Լալայան. Գ. 142.*
*Լուսանկ. տախտ. III, 13*



***31. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀ.*** *երկրորդ մույթի արևմայան կողին. երեսով արևմուտք. 10 տող.*

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՍ Ի|Մ ԳԻՐԷ ՏՆ ԲԱՐՍ|ՂԻ, ՈՐ ԱՌԻ ԶՏԱՆԶՈ|ՒՏՍ Ի ՀԱՅՐԵՆԱՏԵ|ՐԱՑՍ. Ի ՏԱՐՈՋՆ:Դ: |ԱՒՐ ԺԱՄ ՔՐԻՍՏԱՓՈ|ՐԱ ԵՒ ՄԽԻԹԱՐՍ| ԿԱՏԱՐԻՑՔ ՀՐԱՄԱՆԱՑՍ ԱՒՐ-ՀՆԵԱ|Լ ԵՂԻՑԻՆ.

*Ջալալյան, Ի, 302։ Ալիշան, 238.*
*Լալայան Գ. 142.*



***32. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀ.*** *երրորդ մույթի հարավային կողին. երեսով հարավ. 4 տող.*

ԶՀԱՅՐ ԳԷՈՐԳ, ԱՇԽԱՏԱՒՈՐ ՏԱՆՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ



**33. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ.** *երրորդ մույթի վրա. երեսով հարավ. 6 տող.*

ՅԱՆՈՒՆ ԱՑ |ԵՍ ԱՆԱՐԺ|ԱՆ| ԱՂԱԽԻՆ|... ՄԻԱԲԱ-|ՆԵՑԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ. Ի ՏԱՐՈՋՆ : Ա : ԺԱՄ ԱՆԽԱՓ|ԱՆ|

*Վերջին բառի ԱՆ տառերը չեն գրվել, թեև անդ կա։*

**34. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ.** *Նեխսում ընկած փլվածքների մեջ, կամարի մաս կազմող բեկորի մեջ ագուցված խաչքարի շրջանակներին.*

ՑԻՇԵԱ ՔՍ ԶՎԱՍԱԿ ԶՆՈՒԱՍՏ ԿՐԱՒՆԱՒՈՐ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ.

**35. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ.** *կենտրոնական մասում փլվածքների մեջ ընկած մի մեծ խաչքարի թիկունքին. 14 տող.*



ԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ...... Ք|ՍՀԱՆԱ| ՍՊԱՍԱ-|ՒՈՐ ՍԲ ՈՒԽՏԻ|Ս ՏՆԿԵՑԻ ՏՈՒՆ|ԿՍ........ |ԱԶԳԻՍ ԵՒ ՀԱՄԵՂԱՃԱՇ.....|ԵՒ ՍՏԱՑԱ| ԶԲԱԿԵՐԻՆ ՀՈՂՆ|ԻՎ|ԱԵԼՈՒՄՆ ՍՊԱՍԱ-ԻՈՐԱՑ ՍՈՐ|ԻՆ. ԵՒ ՑԻՇԱՏԱԿ ԻՆՁ. ԶՈՐ ՀՐԱՄ|ԱՆԱՒ ՄԵԾԻ ԱԹՈՌԱԿԱԼԱՑՆ ԵՒ ՄԻԵ|ՂԷՆ ԵՂԲԱՑՐՈՒԹԵԱՆՍ ԿԱՐԳԵՑԻՆ |ԻՆ|Ջ- Ի ՏԱՐՈՋՆ: ԺԵ: ԱՒՐ ԺԱՄ Ի Ջ|ԵՌՆ| ԺԱՌԱՆԳՈՐԴԱՑ ՍՈՐԻՆ. ԿԱ|ՏԱՐԻՉՔ|Ն ԱՒՐՀՆԻՆ ԱՑ ԵՒ ԽԱ|ՓԱ|ՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ:

ԹՎ.: ՋԿԵ:

*Վերջին երկու տողը գրված է խաչքարի հյուսիսային կողին։ Խաչքարի վերին աջ և ներքին ձախ մասերը կոտրված են։ Սկզբնական տեղն անհայտ է։*

*Լուսանկ. տախտ.* IV, *15*

**36. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ.** *ներքուստ. փլատակների մեջ ընկած խաչքարի ճակատին և շրջանակներին.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵԱՑ
ԷՊԻՍԿՈՊՈՍ . ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ Ի
ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՑ ՄԵԾ ՀՈՐ ԻՄ
ՈՐ Ի ՔՍ ՉՐԱԲՈՒՆԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԻ
ՑԻՇԵՑԷՔ Ի ՏՐ...։ՊԾ։ ԹՎ.

*Առաջին տողի բաց տեղը գրության ժամանակ վնասված է եղել։*

*Արձանագրության տառերը մաշված ու վնասված են։ Խաչքարը շինված է եղել հատկապես պատի մեջ ագուցվելու համար։*

*Հիշատակված Գրիգոր Րաբունապետն անշուշտ Գրիգոր Տաթևացին է, իսկ Առաքել եպիսկոպոսը Տաթևացու քրոջ որդի և աշակերտ Առաքելն է, նշանավոր մատենագիր և տաղասաց։ Առաքելը նորոգել է այս սրահը «Եւ խաչ իմն օծեալ ի յիշատակ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, և կառուցեալ յիւրմէ շինեալ գաւթին ի մէջ սեանն»։ Ըստ Ե. Լալայանի «Գաւթի Բ. սեանն» վրա։*

*Օրբելյան, 525։ Լալայան Գ. 143. 36*
*Լուսանկ. տախտակ* IV. *16*

**37. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ.** *ներքուստ. փլատակների մեջ ընկած խաչքարի մաս.*



ՌԵՐԿՐՊԱԳՈՂՔ ՍՐԲՈ ՆՇԱՆԻՍ.....
...ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԹՎ.։ՊԷ։

*Նախնական վայրն անհայտ է.*

*Լուսանկ. տախտակ* IV, *16*

**38. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ.** *արևելյան մասում. Գրիգոր Տաթևացու դամբարանի վրա արտաքուստ.*



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՑ ՇԻՆԵՑԱՒ ՍԲ ՄԱՏՈՒՌՍ ԵՕԹՆԱԼՈՑՍ ՐԱԲՈՒ|ՆԱ-
ՊԵՏԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՈՍԿԵԲԵՐԱՆԻՆ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵլԱյԼ ՎլԱյՐԺլԱյ-

ՊԵՏԻՆ ՄԵ|ՐՈՑ ԵՒ ԶՈՐ[Ր]Ո[Ր]Դ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՍԲՑՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵ[Ւ]ԱՑԻՈՑՆ |ԶԵՌԱՄԲ ԲԱԶՄԱՇԽԱՏ Ե[Ւ] ՕԳՏԱԶԱՆ ՍԻՒՆԵԱՑ ՊԵՏԻ ՏՆ ՅՈՎԱԿԻՄԱ| ՍԻՒՆԵՑԻՈՑ. ԱՐԴԵԱՄԲ Ե[Ւ] ԾԱԽԻՒՔ ԲՌՆԱԿՈԹԵՑԻՈՑ ԱՑՍԻՆՔՆ|

*Տր Գէորգ Տր Յակոբ և Տր Յարութիւն քահանայից նաև Կարապետին և Մկրտչին, Յակոբջանին, Սիմիօնին, Ագգէին, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին և Մարտիրոսին, Քարամղուլոյն, Ստեփանին և Յօնանին, Յարութիւնին, Մօսէսին, Մկրտչին, Շահնողարին և Ածատուրին, այլև բարեպաշտուհի կանանցն Նազլուին, Հուրիղատին, Մարեամին, Գուլփարիին, որոց յիշատակն օրհնութք եղիցի և աղօթք սրբոյս Գրիգորի ի վերա նոցա լինի, ամէն։ Կատուցաւ սբ ի հայրապետութեան սբյ գահին էջմիածնի Տն Ղուկասու ի։ ՌՄԼԶ։ թուոջս մերում, յաւուրս Փանահեան Իբրահիմ խանին։*

*Վերջին երկրաշարժի ժամանակ սրահի և ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու փլած բեկորներն ամբողջովին ծածկել են Տաթևացու դամբարանը. արձանագրության ղծադրված մասը տալիս ենք ըստ Փափազյանի լուսանկարի (ըստ լուսանկարի այդ մասը եղել է արևմտյան պատին արտաքուստ). մնացածը լրացնում ենք ըստ Լալայանի հրատարակության, մանրատառով։*

*Փափազյանց Ն.։ Լալայան, Գ. 135.*



***39. ՏԱԹԵՎ. ՄՐԱՀ. Գ. Տաթևացու** դամբարանի արևմտյան պատին ագուցված երեք խաչքարերից մեկի վրա.*

ՍԲ. Խ[Ա]ՉՍ Ց[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ ԼԾԷՆԵՑԻ ՄՕՍԷՍԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ.

*Լուսանկ. տախտ.* IV, 7.

***40. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** արևմտյան մուտքի քանդակազարդ դռան վերին մասում. 3 տող.*



:ԶԲ:ԵՍ ՏՐ ՀԱՑՐԱՊԵՏՍ. ԾԱՌԱՑ ԲԱՐՁՐԵԼՈՑ|Ն ԿԱՆԳՆԵՑԻ ԶԴԱՍԵՐՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԴՈՒՌՆՍ, ԶԻՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԷՔ ԱՂԱԶԵՄ.

*Վերջին երկրաշարժից հետո դուռը փոխադրված է Երևան, պատմության թանգարան, արձանագրության միջին մասն այժմ ջարդված է և չկա.*

*Ալիշան, 236, Լալայան, Գ, 142.*

*41. ՏԱԹԵՎ ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի ճա-կատակալ կամար քարի վրա. 8 տող.*



Ի ԹՎ:ՉԽԴ:| ԶՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԵ|ՏՐԱՊԱՒԼԻՏ ՍԻՒՆԵԱՑ ՈՐ Է ՊՌԱԻ|ՏԱՒՖՐԱՒՆՏԷՍ՝ ՀԱՈՑ ՄԵԾԱՑ ՈՐ|ԴԻ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱԻՃԻՆ Շ|ԻՆՈՂ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Ջալալյան Բ. 302. Փափազյանց Ն. Ալիշան 234, Լալայան Գ. 141. Լուսանկ. տախտակ V,19, (լուսանկարի մեջ ձախ կողմի ներքին անկյունը ծածկված է փլած մեծ ըեկորով)։*

*42. ՏԱԹԵՎ. ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ. բեմի վերին կամարի ամբողջ երկարությամբ. 1 տող.*



ԳՆԱՑՔ ԳԵՏՈՑ ՈՒՐԱԽ ԱՌՆԵՆ ԶՔԱՂԱՔՍ ԱՍՏՈԾՈՑ. ԵՒ ՍՈՒՐԲ ԱՐԱՐ ԶՅԱՐԿՍ ԻՒՐ ԲԱՐՁՐԵԱԼՆ.

*43. ՏԱԹԵՎ. ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ. հյուսիսային պատին. մկրտության ավազանի կողքերին.*



ԶՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ.

*40, 41 և 42 արձանագրությունները վերաբերում են շինության ժամանակին. 40-ի մեջ հիշատակվող Ստեփանոսը Օրբելյանն է, եկեղեցու շինողը։*

**44. ՏԱԹԵՎ. ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. հարավ արևմտյան անկյունում թափված քարակույտերի մեջ. երեսպատման քարի վրա. 7 տող.*



....ԵՒ ԵՍ ԿԱՄՐԻԳԵԼՍ ՈՐԴԻ...|ՍԲ ՈՒԽՏԻՍ
ՄԻԱԲԱՆ ԳՈՂ ԵՏՐՈՒ ՀԱՅՐԵՆԻՒՔ|Ն ԵՐԵՔ-
ԵԱՆ ՍԲ ԱՌԱՔԵԼ|ՈՑՍ ՑԱՁԳԱՑ ՑԱՁԳ
ԵՒ ՋՈՒՆԻ......ՈՔ ՑԱՆԴԳՆԻ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ
Պ|ԱՐՏԱԿԱՆ Է |ԵՒ ՑԱՄԵՆԱՑՆ ՍՐԲՈՑ
ԱՆՄԱՍՆ ԵՒ ԲԱ|ԺԻՆ ԸՆԴ ՑՈՒԴԱՅԻ
ԱՅ|ՌՑԷ։ Ի ԹՎ.. ՁԿԵ։

*Մեծ արձանագրության միջին մասն է. նախնական տեղն անհայտ. բայց հավանաբար դրսից, հարավային պատին.*

*Լուսանկ. տախտ.* IV, *18*



**45. ՏԱԹԵՎ. ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ հարավ-արևմտյան անկյունում պատի վրա մնացած արձանագրության մաս.*



**46. ՏԱԹԵՎ. ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ հարավ-արևմտյան անկյունում ընկած մի քարի վրա.*

ՁԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ

**47. ՏԱԹԵՎ. ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային և արևելյան պատերի վրա. 4 տող.*





ԱՅՍ Է ԳԻՐ ԱՐՁԱՆ...ՈՐ ՄԱՋՐԷՆ ՄԻՆՉԵՎ ԿՈԹ ԻՆՉ ԳԵՂ... ՏԱՐԻՆ:Բ:
ԿԱՊԱԼ ՋԷԹ ՎԱԽՃՆ ՏՎԻՆ ՄԲ ԱՌԱՔԵԼՈՑՍ ԼՈՒՍԱՑՈՒՆ ԻՒՐԵԱՆՑ ՀՈԳՈՑՆ,
ՈՐԴՈՑ ԵՒ ԹՈՌԵԱՆՑ ԱՆՁԻՆՉ ՑԻՇԱՏԱԿ ՄԵԼԻՔ ԹԱՆԳՐԳՈՒԼ ՓԱՌԿՈՒՆ... ՈՐ ՄՋԷՆ ԹԻԱՔԱԼԻՆ ԱՂՁՈՂԱԼԷՆ,
ՃԱՆՂՈՒԼԻՆ, ԱՒԵՏ... ՎՐԴԵՆ......ԵՑ ՄԱԹԷՈՍ ԲԱՑՐԱՐԿՈՆ. ԿԱԾԷՑ, ԸՍՏԵՓԱՆՈՍ ԿՈԹԱՑ, ՂՈՒԼԻԿՆ ԴԵՏԿԱՑ
ԻՒՐԵԱՆՑ ՋԵՌՍ ՑԳԻՐՈՎ, ԳԻՐ ՏՎԻՆ ՇՄԱՒՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ: ԹԷ ՈՎ ՈՔ ԸՆԴԴԱՆԵԱՑ ԿԱՄ ՍԻՏԱՐԱՑ ԽԱՓԱՆԵԼ,
ԿԱՄԵՆԱՑ, ՄԵՐ ՄԵՂԱՑ ՏԷՐ ԼԻՆԻ ԵՒ ՄԱՌՆ ՈՒԴԱՑԻ ԱՌՑԷ, ՁԷՌՍ ՓԹԻ ԵՒ ՀՈՂ ԴԱՌՆԱՑ, ԳԻՐ ՑԻՇԱՏԱԿ
ԱՌ ՁԵԶ ՄՆԱՑ, ՆԵՐՄԷՍ ՈՒՏԱՆՈՒՆ ԱԲԵՂԱՑ.

ԹՎ ԱԿ:ՋՁԱ:

*Արձանագրության առաջին երկու տողերի սկզբի մասերը թափել-կործել են. լրացնում ենք ըստ Լալայանի. երևում է, որ Լալայանի ժամանակ էլ արձանագրության այդ մասերը եղծված են եղել: Այդ մասում ուղղում ենք, մայրէն--ՄԱՋՐԷՆ և կոթ—ԿՈԹ: Ուղղահայաց գծով բաժանածի վերջին մասերը շարունակված են արևելյան պատի վրա, որը լուսանկարելու հնար չկա: Երկրորդ տողասկզբի ...ԷՈՍ-լրացնում ենք ՄԱԹԷՈՍ, հիմք ունենալով 1513 թ. Գեղարքունյաց իշխանների Տաթևի վանքին տված գրությունը, ուր հիշատակված է, այլոց շարքում, նաև սույն ՄԱԹԷՈՍ-ը, ԿԱԾԷՑԻ լորչորշումով ՄԱԹԷՈՍ ԲԱՑՐԱՐԿՈՒՆ ԿԱԾԷՑ— նախադասության մեջ ԲԱՑՐԱՐԿՈՒՆ բառը չենք հասկանում. թերևս երկու բառ լինի, ԲԱՑ և ՄԱՐԿՈՒՆ., որովհետև բառի միջի առաջին Ր-ից առաջ քարը ջարդված է և այդ տառի ձախակողմյան ստեղը կարող է նույնպես կոտրված լինել:*

*Լալայան Գ. 141—142. Ալիշան, Սիսական, էջ 34 (Գեղարքունիքի իշխանների մասին): Լուսանկ. տախտ. V, 20.*

*48. ՏԱԹԵՎ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. հարավային պատի արևելյան անկյունի մոտ. 26 տող.*



Ի ՇՐՋԱԳԱ[Յ]ՈՒԹԵԱՆ ՏՈՄԱՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ։Ժ։ԻՑ ՅՈՐԵՂԻՆԱՑ ԵՒ|
։Լ։ԵՒ։Զ ԹՎՈՑ. ԵՍ ԳՐԻԳՈՐ ԱՄԵ-
ՆԱՆՎ[Ա]ՍՏ ԾԱՌԱ ՔԻ ԵՒ ՈՂՈՐՄՈՒ-
ԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ Ե|ՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ
ԿԱՆԳՆԵՑԻ ԿԱՄԱՐՔՍ| ԵՒ Ի ՎԵՐԱ
ԶԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԶՈՐ ԱՅԼ ՇԻՆՈՒ-
ԹԻՒՆ|Ս Է ԵՒ ՈՐ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՒ-
ԹԻՒՆՔ ԻՄ ՏԱՆՍ ԵՒ ԱՐԴ|ԻՒՆՔ ՎԿԱ
ԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ՅՈՐԺԱՄ ՅԱԽԱՐ-
ՀՈՒՄՆ| ԵԿՆ ԱՄԵՆԱՅՆՍ ԿԱՄԵՑԱՆ
ԵՂԲԱՐՔ ԵՒ ԿԱՐԳԱՒ|ՈՐՔ ՏԱՆՍ
ՎԱՐԶԱՀԱՏՈՑՑ ԼԻՆԵԼ ԻՆՁ ԵՒ
Խ|ՆԴՐԱՒՔ ԻՍԱՒՔ ԿԱՐԳԵՑԻՆ ՔԱ-
ՌԱՍՈՒՆՔ| ՄԻՆ ՈՐ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱ-
ՐՈՋ ԿԱՏԱՐԵՆ Վ|ԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ
ՏԱՌԱՊԵԱԼ ՀՈԳՈՅՍ Ի|ՄՈ ՈՐՉԱՓ ՍՔ
ԵԿԵՂԵՑԻՔԴ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹ|ԵԱՆ ԵՆ
ԱՐԴ ՈՐ ԶԿՆԻ ՄԵՐ ՅԱՋՈՐԴԻՔ Ի ՍՔ
|ԱԹՈՌԴ ՀԱՅՐԱՊԵՏՔ ԵՒ ԿԱՐԳԱՒՈՐ
ՏԱՆՍ ՊԱ|ՐՏԱԿԱՆ ԵՆ ԱՅԴ ՔԱՌԱՍ-
ՆՈՑԴ ՈՐ ԱՆԽԱՓԱ|Ն ԿԱՏԱՐԵՆ ՅԱ-
ՄԵՆԱՅՆ ՏԱՐՈՋ ՈՐ ԽԱՓԱՆ|ՄԱՆ
ՊԱՏՃԱՌՔ ԼԻՆԻ ԵԴԵԱԼ ԺԱՄՈՑԴ|ԻՆՁ
ԵՒ ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱՆԱՒՔ ԵՒ ՈՉ ԿԱ-
ՏԱՐ|Է ԵՒ ԶՐԿԷ ԶՀՈԳԻՍ ԻՄ ԵԹԷ Ի
ՀԱՅՐԱՊԵՏԱ[Ց] ԵԹԷ Ի ԿԱՐԳԱՒՈՐԱՑ
ԶՐԿԵԱԼ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԼԻ[ՆԻ] Ի ՓԱՌԱՑ
ՈՐԴՈՅՆ ԱՅԺՄ ԵՒ ՀԱՆԴԵՐՁ|ԵԼՈՒՄՆ
ԵՒ ԱՆԷԾՍ ԿՐԵՑԷ Ի ՍՔ ԵՐՐՈՐԴ[ՈՒ]|
ԹԵՆԷՆ ԵՒ ՄԻ Գ[Տ]ՑԷ ԹՈՂՈՒԹԻՒՆ Ի
ՔԷ Ա[Յ]| ԻՍԿ ՀԱՍՏԱՏԻՉՔ ԳՐՈՅՍ
ԱՒ[Հ]ՆԵԱԼ ԵՆ ՅԱՅ։

*Բոլոր հրատարակիչների մոտ էլ արձանագրության թվականը նշանակված է՝ ՇՁ, որը սխալ է. Գրիգորը Սյունյաց եպիսկոպոս է եղել 1058—1116 թ. մեր վերծանմամբ արձանագրությունը ունի՝ տառ հոբելյան= =500+30+6=536+551=1087*

*Ջալալյան, Բ 303։ Ալիշան, 236—7.*
*Լուսանկ. տախտակ VI, 21*



**49. ՏԱԹԵՎ. ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. հարավային պատի արևելյան անկյունում. խաչերի թևերի արանքում.*

ՄԻՐԶԱՑՃԼԱՅՆ



**50. ՏԱԹԵՎ. ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. հյուսիսային պատին, խաչերի արանքում.*

ՍԻՄՈՆ ԱՄՆԻՆ, ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՉԵՐՍ ԽԱՉԵԼ ՏՎԻ.
Թ̅Վ̅.: ՌԲ:




**51. ՏԱԹԵՎ. ԲԱԿ.** *հարավային կողմի տնտեսական շենքերի կենտրոնում սրահ-միջանցքի պատի մեջ ագուցված խաչքարի վրա.*

ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ :ՈՒՋ: Թ̅Վ̅. ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ՆՈՐՈԳԵՑԱՒ Ս̅Բ̅ ԵԿԵՂԵՑԻՍ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹ̅Ե̅ ՏՆ̅ ՍՏԵՓԱՆՈՍԻ:




**52. ՏԱԹԵՎ. ԲԱԿ.** *հարավ-արևելյան կողմում. այուն գավազանի մոտ պատին հենած խաչքարի վրա.*

ԵՍ ԱՆԴՐԻԱՍ ԿԱՆ[Գ]ՆԵՑԻ ԶԽԱՉՍ [ՀՈԳ]Ո ԻՄՈ, ՈՐՔ. ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ̅. ԹՎ :ՉԺԸ:

*Թվականի միավորի միայն վերին մասն է փորագրված, տեղ չլինելու պատճառով.*

**53. ՏԱԹԵՎ. ԲԱԿ.** *հարավային կողմի տնտեսական շենքերի մեջ ընկած մեծ, գլորգլորուն քարի վրա. 3 տող.*



ԶՏՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԻՇԵՑԷՔ.
Թ̅Վ̅. :ՉԻ.



**54. ՏԱԹԵՎ. ԲԱԿ.** *հարավային մասի արևելքում. անախսական շենքերի պատի մեջ ագուցված խաչքարի շըր-ջանակներին և տակը.*

ԵՒ ·ՔԱՋՈՒԹԲ. ԱՐԻԱՑԵԱԼ ՄԵԾԱՒ ՃԳՆՈՒԹԲ. ԿԵՑԵԱԼ ՋԱՒՈՒՐՍ ԻՒՐ ԽԱՂԱՂՈՒԹԲ. ՀԱՆԳԵԱՒ Ի ·ՔՍ. ԵՒ ԹԱՂԵՑԱՒ Ի ՍԲ. ՈՒԽՏՍ ՏԱԹԵՒՈ Ի ԴՐԱՆ ՍՐԲՈՑ ԱՌԱ·ՔԵԼՈՑՍ ՄԵՐՁ Ի ՇԻՐԻՄՍ ՍՐԲՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՍ, ՈՐ·Ք ԵՐԿՐՊԱԳԷ·Ք ՍՐԲՈ ՆՇԱՆԻՍ ՅԻՇԵՑԷ·Ք ՋՎԵՐԱԳՐԵԱԼՍՍ Ի ՍՄԱ ԲԱՐԻ ՅԻՇԱ-ՏԱԿԱՒ Ի ՏԷՐ.

*Խաչքարի ճակատը հեստագալում, պատի մեջ ագուցելու ժամանակ տաշել են, երկու տողի տեղով, որով կորել է անունը. 15-րդ տողի վրա մնացել են մեծ տառերի մասեր, հավանաբար թվականն են ուզեցել գրել, բայց թողել են։*

*Պատի մեջ շարելու ժամանակ խաչքարի տակից կտրել են, մնացել են տառերի վերին մասերը, որոնց հիման վրա կարելի է կարդալ թվականը. ԹՎ. ՋԾԵ դրանցից հարյուրավորը և տասնավորը համարում ենք հաստատ. միավորը կարող է և Ե լինել։*

*Լուսանկ. տախտ.* IV, 22



**55. ՏԱԹԵՎ. ԲԱԿ.** *հարավային մասի արևելքում, անտեսական շենքերի պատի մեջ ագուցված խաչքարի ճակատին և շրջանակներին.*

ԱՅՍ ՆՇԱՆ ՓՐԿԱԿԱՆ ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱԿՈԲՈՍԷ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՀՈՒ ԱԾԱԾՆԻՆ, Ի ՓՐԿՈՒԹԻ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ ԱԲՐԱՀԱՄԻՆ.

ԹՎ.:ՊԺԴ:

*Լուսանկ. տախտ.* VII 25

56. ՏԱԹԵՎ. ԲԱԿ. հարավային մասի արևելքում. անտեսական շենքերի պատի մեջ ագուցված խաչքարի ճակատին և շրջանակների վերին մասում. ծաղկագիր և ռելեֆ տառերով.



ՁՏՐ ՀԱՑՐԱՊԵՏ ՍԻՒՆԵ˻Ա˼Ց ԵՊԻՍԿՈ˻Պ˼ՈՍ ՅԻՇԷՔ ՔԻ. ԹՎ.: ՉԺԲ:

Լուսանկ. տախտ. IV, 23



57. ՏԱԹԵՎ. ԲԱԿ. հյուսիսային մասում, Պողոս-Պետրոս եկեղեցու պատի տակ ընկած մի մամռապատ խաչքարի ճակատին և շրջանակների վերին մասում.

ԵՍ ՋԱՆՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ԼԱԼԱՒՆ. ԹՎ. : ՊԾ:

Լուսանկ. տախտ. VII, 26



58. ՏԱԹԵՎ. ԲԱԿ. հարավային մասի արևելքում, տնտեսական շենքերի պատի մեջ ագուցված խաչքարի մասի ներքևում. ԹՎ. :ՊՀԶ...Կ ՀՈԳՈ ԻՄՈ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ, ՏԻՐԱՆՑՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

Պատի մեջ ագուցելու ժամանակ խաչքարը բոլոր չորս կողմերից էլ կտրված է. երկրորդ տողի Կ ավելորդ տառն ապացուցում է, որ գոնե ձախ շրջանակի վրա արձանագրություն է եղել:

Լուսանկ. տախտ. VII, 27

59. ՏԱԹԵՎ. ԲԱԿ. հարավային մասի արևելքում, տնտեսական շենքերի պատի մեջ ագուցված խաչքարի ճակատին և շրջանակներին.



ԱՅՍ ԱՐՁԱՆ ԱՒԾԵԱԼ ԱՐԵԱՄԲ ԱՐԱՐՁԱԿԱՆ. Կ˻ԱՆ˼ԿՆԵԱԼ ԱՂ-ԹՈՂ ՔԱՋ ԱԽՈԱՆ Ի ՓՐԿՈՒԹԻ ⌈ՊԱՐ⌉ՈՆՋԱՆ |.. ⌈ԳՊԱՍՊԱՐԻՆ⌉|

. . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . .

ԿՐԱՒ⌈Ն⌉ԱՒՈՐԻՆ. ՈՐՔ ՀԱՆԴԻՊԷՔ ՄԻՇՏ ԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԵՍ ՂԱՐՍ-ՄԱՆՍ Կ˻ԱՆԿ˼ՆԵՑԻ ԶԽԱ˻Չ˼Ս ՀԱՒՐՆ Ի˻Մ˼.

Զախակողմյան շրջանակի վերին մասի արձանագրությունը դիտավորյալ կերպով քերված ջնջված է:

Լուսանկ. տախտ. VII, 28

*60. ՏԱԹԵՎ. ԲԱԿ. հարավային մասի արևելքում. անտեսական շենքերի պատի մեջ ագուցված խաչքարի մասի վրա.*



...ԽԱԹՈՒՆ ԿԱՆԿՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ
Ի ՓՐԿՈՒԹ֊Ի.

*Պատի մեջ ագուցելու ժամանակ վերևից և ներքևից կտրվել է խաչքարը՝ նույն և արձանագրությունը։*

*Լուսանկ. տախտ.* IV, 24



*61. ՏԱԹԵՎ. ԲԱԿ. հարավային մասում. սյուն-գավազանը հարավ-արևելքում կանգնած մեծ խաչքարի վրա.*

ՏԷՍ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՀԵՊՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԿԱՄԱՒ ԱՅԻ ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՒՈՅ ՀԱՒՐԵՂԲԱՐ ԻՄՈՅ ՇՄԱՈՆ ՎԱՐԴԱ-ՊԵՏԻՆ. ԹՎ. ՋԻԱ։

*Խաչքարի վերի ձախ անկյունը կոտրված է։*

*Լուսանկ. տախտ.* VIII, 29



*62. ՏԱԹԵՎ. մի խաչքարի արևմտյան երեսի չորս կողմերում.*

ՋԵՐԻՑԱԿ, ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆԱԿԱՆ՝ ՇԻՆՈՂ ՏԱՃԱՐԻՍ ՑԻՇԵԱ ՔՍ. ԹՎ.։ ՆԽ։

*Լուսանկ. տախտ.* VIII, 30



*63. ՏԱԹԵՎ. մի խաչքարի հյուսիսային շրջանակին և տակը.*

ԶՊԱՒՂՈՍՍ ԵՒ ԱՆԱՀԱՅՐՆ ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Այս զույգ խաչքարերը (№ № 61, 62) այժմ պահվում են Գորիս քաղաքի գավառագիտական թանգարանում. ըստ տեղեկությունների բերված են Տաթևից.*

*Լուսանկ. տախտ.* VIII, 31

*64. ՏԱԹԵՎ.* վաճից հարավ, *ձորի մյուս ափին, կիսավեր ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատի մոտ կանգնած խաչքարի վրա.*



ՅԱՄԻ ՅIIՐՈՒՄ ՀԱՑ........ԵՍ ՆՎ.ՂԱՍՏ՝ ՔԱՀԱՆԱ ՀՈՎ.ԱՆԷՍ Ի ՏԻ.ԱՑՈՒԹԵՆԷ ՍՆԵԱԼ Ի ՄԲ ՈՒԽՏՍ Ի ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻ ՍՐԲՈՑՍ ԵՒ ՑԵՏՈ ԲՆԱԿԵՑԱ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԱԾԱԾԻՆՍ, ՈՐ ԵՒ ԻՄ ՀԱՒԱՒ ԱՐԴԵԱՄԲ ԳՆԵՑԻ ՁԱԴՈՁԱՆՈՑՆ ԲԱ-ԿԵՐՆ, ՑԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՏԵՂԱՑՍ ՏՐ ՀԱՅՐԱՊԵՏԱ ԵՒ ՏՐ ՅՈՀԱՆԻՍԱ ԵՒ ԱՅԺՄ ՀՐԱՄԱՆԱՒ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍԻ՝ ՆՈՒԻՐԵՑԻ ՀԻՒՐԵԱՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՍԲ ԱԾԱԾԻՆՍ ԻՒՐ ԱՄԷՆ ՍԱՀՄԱՆՈՎ, Վ.Ս ՏԱՌԱՊԵԱԼ ՀՈԴՈ ԻՄՈ, Ի ՎԱԵԼՈՒՄՆ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ՍՈՐԻՆ, ԱԶԱՏ ՅԱՄԷՆ ՀԱՐԿԷ. ԱՐԴ ՈՐ ՈՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՄ ԽԱՓԱՆՈՂ ԼԻՆԻ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻ Ի ՍԲ ԱԾԱԾՆԷՍ ԵՒ ՅԻՒՐ ՄԻԱԾՆԷՆ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ:

*Խաչքարի ճակատի մասը ջարդված է՝ կենտրոնում և վերջում՝ առաջին տողի բռնած սահմանում։*

*Թեև թվականը ջարդված է, բայց արձանագրության մեջ հիշատակված երեք անուններից պարզվում է, որ այն 13-րդ դարի վերջին տասնամյակում է գրված. տէր հայրապետը Սյունյաց եպիսկոպոս էր մինչև 1292 թ. նրան հաջորդեց Տեր Հովհաննեսը մինչև 1295 թ. իսկ վերջինին՝ Տէր Ստեփանոս Օրբելյան պատմագիրը.*

*Այս կիսավեր եկեղեցու և խաչքարի վայրն այժմ կոչվում է* Տումբալանց:

*Խաչքարը ագուցված է բնական ժայռի մեջ, 60 սմ հեռու եկեղեցու արևելյան պատից և հնարավոր չեղավ լուսանկարել արձանագրությունը, որը նայում է եկեղեցու պատին։*



501—3

***65. ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂ. հին աղբյուրի արևմտյան պատին. գլուխ. 5 տող.***



ՇԻՆԵՑԱՒ ՄԱՐԱՔԸՍ Ե[Ի] ԹԱՒԼԱՍ. ԱՂԲՈՒՐՍ: ԺՉ: ԻՆ ՋԵՌՆԴՈՒԻՆՔ [ՎԱՐ-ԴԱՊԵ]ԴԻՆ. ԱՒԱՐԴԵՑԱՒ ՋԵՌԱՄԲՆ. ՇԻՆԵՑԱՒ ԴԱԹԵՒԱՑԻ ՂԱԼԱՍԱՆՑ [Տ]Ր ԳՐԻԳՈՐԻ ԹՈՌ ՏՐ ՊԱՂԴԱՍԱՐԻ ՈՐԴԻ, ՍՈՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՎԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ. ՆԱՏԻՐ ՇԱՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԸՆ ԷՐ. ՑՈՐԵՆԻՆ ԲԵՌՆ ԳՆԱՐ: ԺԲՌ: ԴԻԵՆ ԹՎ: ՌՃՂԴ:

ԹԱՍԱԼԻ.

*Առաջին երեք տողասկզբից մեկական տառ պակաս է. դրանք եղել են այլ քարի վրա, որն այժմ ընկած-կորած է։*

*Վերջին՝ ԹԱՍԱԼԻ բառը գրված է հեռու և չի վերաբերում արձանագրությանը, գրչությամբ էլ ավելի հին է.*

*Լալայան Գ. 143.*
*Լուսանկ. տախտ.* IX, 32

***66. ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂ. գյուղամիջի ս. Մինաս եկեղեցու հարավային մուտքի գլխին շրջանակի մեջ. 1 տող.***



ՏԱԹԵՒԱՑԻ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ, ՇԻՆՈՂ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԱԾ ԹՎԻՆ: ՌՂԵ:

*Երկրորդ տողը, որը նույն արձանագրության կրկնությունն է չնչին գրչագրական և ուղղագրական տարբերություններով, գրված է նույն հարավային մուտքից դեպի արևմուտք՝ պատի վրա։*

*Այս Ներսես վարդապետի տապանաքարը գտնվում է Տաթևի վանքում. (տե՛ս արձ. № 75)*

*Լալայան, Գ. 145*



67. *ՏԱԹԵՎ. ՄԵԾ ԱՆԱՊԱՏ. գավթի արևմտյան պատին, արտաքուստ. 9 տող.*

ՅԻՇԱՏԱԿ Է | ՄԵԼԻՔ ԵԿԱ|ՆԻՆ ՈՐ :Ե: ԹՈՒ|ՄԱՆ
ՏՈՒԱՒ | ԳԱՒԻԹՆ ՇԻՆ|ԵԼՈՑՆ, ՈՐ ԳԼՈ|ԻԽՆ
ՍՐԲԱՏԱՆ | ՔԱՐԱՆՑ ՇԻՆԵՑԻՆՔ.

*Լուսանկ. տախտ.* IX *33*

## ՏԱԹԵՎ

*Արձանագրություններ, որոնք այժմ տեղում չկան, (փլատակների տակ են մնացել, կամ, շարժական իրերի վրա գտնվելով՝ տարվել են)։*

68. *ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ եկեղեցու պատին.*

Զգորգ Իրեց յիշեցէք.

*Ալիշան, 235.*

69. *ՏԱԹԵՎ. ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ եկեղեցու պատին.*

Զհայր Վասակ յիշեցէք.

*Ալիշան, 235.*

70. *ՏԱԹԵՎ. ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ եկեղեցու պատին.*

Յիշեցէք զԳէորգ անուն ծառայս.

*Մ. Փափազյանց. Գիրք. Ե.*

71. *ՏԱԹԵՎ. ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ եկեղեցու պատին.*

Յիշեցէք զՅակոբ նուաստ քահանայս.

*Մ. Փափազյանց. Գիրք. Ե.*

72. *ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ եկեղեցու արևմտյան գավթում, տապանաքարի վրա.*

Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս
շինող եկեղեցւոյս. թուին: Զխ,

*Աճառյանն իրավացիորեն թիվը սխալ է համարում, որովհետև այդ թվին Յովհաննես եպիսկոպոս չկար Սյունիքում. (Անձ. բառ. Գ. 599).*

*Ալիշան, 235. Լալայան Գ. 143.*

**73. ՏԱԹԵՎ. ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ** *եկեղեցու արևմտյան գավթում. տապանաքարի վրա.*

Այս տապան հանգստարան սրբազան արհիեպիսկոպոսին
Մեսրովբայ Սիւնեաց նահանգի. :ՌԾԺԲ:

*Զալալյան Բ, 301. Ալիշան. 235.*
*Լալայան, Գ. 143.*

**74. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ** *եկեղեցու արևմտյան գավթում, տապանաքարի վրա.*

Այս յարկ տապանի և դիր դամբարան մեծահաւատ կնոջ Արուս Խաթունի.
դստեր Սադունի և ամուսնոյ Տարսայիճ իշխանին. թվին :ՉԼԵ:

*Գրչի սխալմունքի և կամ, որ ավելի հավանական է, Զալալյանի սխալ վերծանման շնորհիվ (Զալալյանից են վերցրել բոլոր մյուս հրատարակիչները) այս անունը դարձել է Արուս Խաթուն. մինչդեռ հայտնի է, որ իրականում նրա անունը եղել է Արզու Խաթուն։ Արզու Խաթունը պատմագիր Ստ. Օրբելյանի մայրն է. վերջինս միշտ Արզու Խաթուն է գրում իր մոր անունը. (համեմատիր օր. էջ 416 և 425. 1910 թ. հրատ.)։*

*Աճառյանի մոտ երկու անգամ է հիշատակված սխալմամբ. մեկ՝ Արզու Խաթուն—էջ 274 և մեկ՝ Արուս Խաթուն—էջ 300. (Անձ. բառ. հատոր Ա).*

*Զալալյան Բ. 304. Ալիշան, 235 Լալ. Գ. 142.*

**75. ՏԱԹԵՎ. ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ** *եկեղեցու արևմտյան գավթում. տապանաքարի վրա.*

Ի յայս տապան քնարանի,
կա հանգուցեալ նշխար մեծի
Ներսեսի Րաբունեաց պետի
Եւ եպիսկոպոսի Սիւնեաց նահանգի.
Գոլով տեղեաւ Տաթևացի
Եւ եկեղեցւոյ շինողի,
Եղև փոխեալ ի կենաց աստի
ՌԾերրորդ թուի, յիշեցէք:

*Ներսեսի շինած եկեղեցին Տաթև գյուղի միջին է, ։ՌՂԵ։ թվին. տե՛ս արձանագրություն № 66*

*Զալալյան Բ. 301. Ալիշան, 237—38. Լալայան Գ. 143.*

**76. ՏԱԹԵՎ. ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ** *եկեղեցու արևմտյան գավթում. տապանաքարի վրա.*

Այս հանգիստ Զաքարիայի երջանիկ արհիեպիսկոպոսի.
թուականիս հայկականի :ՌԾ:

*Զալալյան Բ. 301. Ալիշան, 235. Լալայան, Գ. 143.*

77. ՏԱԹԵՎ. *մի ոսկե խաչի թիկունքին.*

Տեառն Յովհաննիսի Սիւնեաց եպիսկոպոսի է սուրբ
նշանս. ի թուականիս :ՆԿԶ: կազմեալ:

*Ալիշան, 231. Կոստանյանց, 15.*

78. ՏԱԹԵՎ. *մի զանգի վրա.*

Թվ. :ՁԾԱ: Լսելի արա ինձ, Տէր, զձայն ցնծութեան և զուարխութեան,
Անեղին ծննդեամբ: ՁՏէր Ստփ. Սիւնեաց զահին կոչեա ի փառսդ հայրենեաց:

*Ալիշան, 236. Լալայան Գ. 140, Մ.Փափազյանց. Գիրք Ե.*

79. ՏԱԹԵՎ. *մի այլ զանգի վրա.*

Թվ. :ՁԾԳ: Լսելի արա ինձ, Տէր զձայն ցնծութեան և զուարխութեան.
և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալ. զքա Քրիստոս Աստուած ի Տէր
Ստփ. (Ստեփաննոսի):

*Ալիշան, 236. Լալայան. Գ. 140.*
*Մ. Փափազյանց, Գիրք Ե.*

80. ՏԱԹԵՎ. *վերոգրյալ զանգի մոտ.*

Այս Տէր Ստ. Օրպէլեանց մեծաւ ջանիւ ուղղափառ պահէ
զաւանդս յեկեղեցիս Հայոց. Տէր Ստփ. Մետրապօլիտ Սիւնեաց,
որ է Պրոտօփրանտէս ամենայն հայոց:

*Լալայանն այս արձանագրությունը միացրել է նախորդի հետ.*

*Մ. Փափազյանց, Ե. Ալիշան. 236. Լալայան Գ. 140.*

81. ՏԱԹԵՎ. ԳԱՎԹՈՒՄ, *մի սեմաքարի վրա.*

Կամաւն Աստուծոյ ես Գրիգոր փոխեցի զիմ հողն, զինչ որ հաստատուն
կայր գնեցի և փոխեցի. Եւ ետու հիշատակ սուրբ եկեղեցւոյս:
Որ խափանել ջանայ՝ մեր մեղացս տէրն է: Թվին :ՁՂԴ:

*Ջալալյան Բ. 301--302. Ալիշան, 238*
*Լալայան Գ. 142. Կոստանյանց, 168.*

82. ՏԱԹԵՎ ՍՐԱՀ Գ. *Տաթևացու գերեզմանաքարի երեսին ագուցված մարմարի շուրթի.*

Ծառայ Ցնի սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն. Յովակիմ
Եպիսկոպոս և Աբրահամ վարդապետ: Գ. Ս. Ք. Ի.

*Վերջին չորս անջատ տառերը համարվում են չորս ավետարանների սկզբնատառերը:*

*Ե. Լալայան. Ազգ. Հանդ. Գ. 134—135.*

83. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀԻ միջին կամարի վրա.

Թվ. :ՌԾԴ: վերստին ես նորոգել Տէր-Եղիշեն
զգաւթաւք և սալն. յիշատակ իւրոյ յիշեցէք:

Լալայան Գ. 142.

84. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀԻ մուտքի ճակատին.

ԶՏէր Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս շինող
սուրբ եկեղեցւոյս յիշեցէք ի Քրիստոս.

Տեր Յովհաննեսը (1006—1058) շինել է այս սրահը և ուրիշ շենքեր. տե՛ս նույն արձանագրություն № 3։

Ալիշանը սխալմամբ երկու անգամ է գրել այս արձանագրությունը։

Ջալալյան Բ. 303. Ալիշան, 231 և 135.

85. ՏԱԹԵՎ. մի խաչի վրա.

Յիշատակէ Ղազանչեցի Դաւիթի որդի Յոնանու. Թվ. Ռ.Մ.Լ.Դ:

Լալայան. Գ. 140.

86. ՏԱԹԵՎ. մի պահարանի կողքերին.

Եդեալ ի Վանս սուրբ Թադէի, մասունք սրբոյն Յակոբոսի,
եղբօր ըստ մարմնոյ տեառն Յի.

Լալայան. Գ. 140.

87. ՏԱԹԵՎ. տապանագիր.

Այս է հանգիստ Տէր Մկրտչի,
Որ ի լեհաց եկեալ լինի,
Աստ սուրբ կրօնաւոր առ տէր փոխի,
Հազար հարիւր իննեակ թվի:

Ջալալյան Բ. 302։ Ալիշան, 228. Լալայան Գ. 143։

88. ՏԱԹԵՎ. բակում, սյուն-գավազանի մոտ, արևմուտից. տապանաքարի վրա, փոքրատառերով.

Աստ հանգչի բազմաշխատ Սիմէոն
արքեպիսկոպոսն սիւնեաց հօտի, որ էր
բնիկ տաթեւացի, վախճ. ի 1858 ամի.

Փափազյանց. Ե.

**89. ՏԱԹԵՎ. ս. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ եկեղեցու հարավում.**

.....Мы Сисак и Саркис, по воле Божьей
дети Шахандухты. ... В год 765 (1316)
**....Մեք Սիսակ և Սարգիս, կամաւն Աստուծոյ,**
**որդիք Շահանդխտոյ.... ի թվին ։ՉԿԵ։**

Ерицов, 417

**90. ՏԱԹԵՎ. ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ հարավում, տապանագիր.**

Сия гробница Тер Ованеса (по преданию-
астронома) год 950 (1501)
**Այս է տապան Տէր-Յօվանէսի. Թվին ։ՋԾ։**

Ерицов, 417

**91. ՏԱԹԵՎ. բակ. գերեզմանաքարի վրա.**

Гробница „Тер-Степана“ год 707 (1258)
**Այս է տապան Տէր Ստեփանի, թվին ։ՉԷ։**

Ерицов, 418

**92. ՏԱԹԵՎ, բակ, գերեզմանաքարի վրա.**

Гробница „Священика Мотеоса“
**Այս է տապան Մատթէոս քահանայի.**

Ерицов, 418

**93. ՏԱԹԵՎ, բակ. տապանագիր.**

Тер Ованеса помяните. Лето 740 (1291)
**ԶՏէր Յօվանէս յիշեցէք. թվին ։ՉԽ։**

Ерицов, 418

Ерицов-ը *Տաթևի վանքի մասին գրած իր հոդվածին կցել է նույն վանքին վերաբերող 25 արձանագրությունների ռուսերեն թարգմանությունները. դրանցից 13-ը (1—13) վերցված են Ս. Ջալալյանի մեր հիշատակած գրքից և 12-ը (14—25) վերծանել ու թարգմանել է* Раионов-*ի լուսանկարներից. վերջիններից այս 5-ը (մեր №№ 88—92) այժմ տեղում չկան. առավել ճշտության համար տալիս ենք և՛ ռուսերենը և հայերեն թարգմանությունները։*

*Համեմատել* А. Д. Ерицов—Татевский Монастырь—Пятый Археологический С'езд в Тифлисе. Москва 1882 г.